են հրամայում հետևյալ հարցի մասին. եթե հայ ժողովրդի որոշակի համայնքներ, ինչպես նաև եպիսկոպոսներ, սևագլուխներ և ուրիշներ, որոնք բնակվում են Զուխուր-սաադ, Ուչքիլիսա (Էջմիածին) կոչվող վանքում, Շատիկ անունով հայտնի անապատում և Թուման-ե Նախջևանի Եղեգիսի ձորում գտնվող Կարմիր վանքում և այլուր, ինչպես նաև Տաթևի և Վաղդիի վանքերում, Դարաբաս գյուղում, որ հայտնի է Ագվերդ անունով, և Ղափանաթի այլ վայրերում, զիմմի լինելով շարունակեն զիմմիների կարգով ապրել և համաձայն շարիաթական օրենքի կատարեն ջիզյայի պարտավորությունը ու նրան հակառակ որևէ գործ չկատարեն և ուզեն ըստ քրիստոնեական հավատքի իրենց ննջեցյալներին թաղել, ամուսնության ակտեր կատարել, կոչնակ զարկել, աղոթել և աղոթքի ժամանակ բարձրաձայն երգել, այս դեպքում որևէ մուսուլման իրավունք ունի հակառակ լուսավոր Շար'ի՝ հիշյալ համայնքին նեղություն պատճառել, արգելք հանդիսանալ և չթողնել, որ նրանք վերոհիշյալ ձևով իրենց կենցաղը վարեն, թե ոչ: Պարզեցեք[1]:

Սաղրը այս հարցին ժխտական պատասխան է տալիս և հաստատում է, որ ջիզյա վճարող հայերը այդ իրավունքները ունեն:

Թե հայաբնակ որոշ վայրերում ինչ աստիճանի են հասել կրոնական հալածանքները, այդ կարելի է եզրակացնել այն փաստից, որ եղել են դեպքեր, երբ հայերին թույլ չեն տվել իրենց «հայրենի» կալվածներում աղատորեն վարուցանքով զբաղվել: 1658 թվականին հրապարակված ֆեթվայից հայտնի է դառնում, որ հարկ է եղել հարցում կատարելու բարձրագույն Դիվան-ալ-սադարաթին, թե՝ «երբ արդեն շարիաթական ձևակերպմամբ որևէ կալված որպես մուլք վերջնականապես պատկանում է որևէ հայի, համաձայն շարիաթի՝ այդ հային թույլատրվում է արդյոք այդ կալվածքը մշակելու, թե ոչ»:

Սաղրը այս հարցին դրական պատասխան է տվել և կնքել[2]: Այս փաստը ինքնին ապացուցում է, որ շատ դեպքերում մուլքային սեփականության իրավունքի հարցում հայերի նկատմամբ լուրջ դժվարություններ են հարուցվել:

Ֆեթվաներից երևում է, որ խիստ տարածված երևույթ է եղել նաև այն, որ երբ հայ ռայաթներից որևէ մեկը առևտրական կամ այլ նպատակներով մի տեղից մի այլ տեղ էր գնում, այնտեղ նրանից պահանջում էին կրկին անգամ գլխահարկ վճարել, հակառակ դեպքում ստիպում էին հավատափոխ լինել: Այդ անշուշտ մեծ մասամբ տեղի էր ունենում հայ վաճառականների հետ, որոնցից այս եղանակով փորձում էին խոշոր գումարներ շորթել[3]:

17-րդ դարի 60-ական թվականների Դիվան-ալ-սադարաթի մի շարք ֆեթվաներում Հակոբ կաթողիկոս Ջուղայեցին հարկադրված է եղել շեշտել տալ, որ «համաձայն գոյություն ունեցող օրենքների, հայ ռայաթները ջիզյան վճարում են միայն իրենց հիմնական բնակության վայրում, մեկ անգամ, և այլ վայրերում ճամփորդելիս նրանցից ջիզյա չի պահանջվում»: Սակայն չնայած դրան, նույն ֆեթվաների բովանդակությունից պարզվում

[1] ՄՊՎ, թղթ. 1բ., վավ. № 144, հմմտ. թղթ. 1բ., վավ. № 145:
[2] ՄՊՎ, թղթ. 1բ, վավ. № 107:
[3] ՄՊՎ, թղթ. 1բ., վավ. №№ 132ա, 132բ, 132գ, 146 և այլն: